



## Ա. Ն. ՏԵՐ-ՂԵՎՈՆԴՅԱՆ

### ՔՐԻՍՏՈՆՅԱ ԱՐԱԲՆԵՐԸ ԵՎ ՀԱՅԵՐԸ ՄԻԶՆԱԴԱՐՈՒՄ

Քրիստոնյա արաբները, որոնց ճակատագիրը թիշ ծանոթ է գիտական հասարակությանը, երկարատև պատմություն ունեն և սկզբ կապի մեջ են եղել արևելյան քրիստոնյա ժողովուրդների, ընդ որում և հայերի հետ:

Քրիստոնեությունը ներթափանցել էր Արաբիա դեռևս Գ—Դ դարերում, մանավանդ ասորի քարոզիչների միջոցով: Ե—Զ դարերում Արաբիայում իրար հետ մրցում էին ասորի միաբանակ, երկարնակ և նեստորական քարոզիչները<sup>1</sup>, սակայն նրանցից ոչ մեկը չկարողացավ լրիվ հաջողության հասնել:

Հայունի է, որ 356 թվականին Կոստանդ կայսրը պատվիրակություն ուղարկեց Եմեն՝ արիստական Թեոփիլոս Խնդրոս գլխավորությամբ<sup>2</sup>, որն Աղենում և Հիմյարի երկրում եկեղեցիներ կառուցեց: Մոտավորապես 500 թվականին Եմենի Նաշրան քաղաքի բնակչությունը քրիստոնեություն ընդունեց և դրանցից հետո ունեցավ իր եպիսկոպոսները: Սակայն քրիստոնեության հետ Եմենում մրցում էր մովսիսական (հրեական) կրոնը,

և առաջ Հիմյարի Զո Նուվաս թագավորը, մովսիսականության հարելով, հաղածանք սկսեց քրիստոնեցից դեմ, որի հետևանքով 525 թվականին քրիստոնյա եթովագացիք հարձակվեցին ու գրավեցին Եմենը:

Երենց հիմնամյա (525—575) տիրապետության շրջանում եթովագացիք ջանքեր թափեցին Եմենում քրիստոնեությունը տարածելու: Եթովագիայի թագավորության (Արտում) կողմից նշանակված կառավարիչ Արրամիան Սանա քաղաքում կատուցեց մի փառավոր եկեղեցի, նախառակ ունենալով այն դարձել ասքող Արաբիայի համար նոր սրբավայր և մրցակից Մեքբայի հայտնի մահմետական ուսուավայրի: Սակայն եթովացոց շամբերը թիշ արդյունք տվեցին, քանզի 575 թվականին տեղական դժողով տարրերի օգնությամբ Սասանյան Իրանը նվաճեց Եմենը:

Արաբիայում քարոզական աշխալութ գործունեություն ծավալեցին ասորի նեստորականները, որոնք քրիստոնեությունը տարածեցին Հիրայի (Միջագետքի հարավում) արաբական Տամանիս ցեղի մեջ: Սակայն իշխող Լախմ տոհմի վերնախավը, կապված լինելով Սասանյան արքունիքի հետ, միշտ էլ պաշտոնապես մնում էր ներանու: Հիրայի արաբաց եպիսկոպոսները հիշվում են ամրող Ե—Զ դարերում նեստորական եկե-

<sup>1</sup> Aziz S. Atiya, A History of Eastern Christianity, London, 1969, p. 258—259.

<sup>2</sup> Ph. Hitti, History of the Arabs, London, 1946, p. 61.

ղեցական ժողովներում: Հիրան սերտորեն կապված էր Եմենի հետ և հետաքրքրական է նշել, որ Հիմյարի թագավոր Զու Նուվասի վերոհիշյալ հայածանքի հարցը բնարկվել է Հիրայի Մունզիր (Մունդա)<sup>3</sup> իշխանի մոտ: Զ դարի վերջին քրիստոնեությունը մուտք գործեց հայ Լահան իշխանների մոտ: Է դարի սկզբին Նուման Գ իշխանն ընդունեց քրիստոնեությունը և մկրտվեց հետուրական ծեսով, սակայն Սասանյաններն այդ բանը չենթեցին հրան:

Սրաբների մեջ քրիստոնեությունը տարածելու հարցում հետուրականների հետ մըրցում էին միաբնակ ասորիները: Նրանք հաջողություն ունեցան Աստրիքի կողմերում, որ արդեն Դ—Ե դարերում կային սարակինոսյան (արաբական) եպիսկոպոսական վիճակներ: Դամակելուց հարավ-արևելյան հաստատված էր արաբական Ղասան մեծ ցեղը<sup>4</sup>, որն ընդունել էր քրիստոնեությունը և կապված էր Անտիոքի միաբնակ պատրիարքության հետ<sup>5</sup>: Երբ 563 թվականին Ղասանի իշխան (հուն. Փիլարխ) Հարիսը Կ. Պոլիս այցելեց, Հուստինիանու Ս. կապրից խնդրեց, որ Ենեսիայի ասորի եպիսկոպոս Հակոռ Բարադեսոս լինի հայ արաբաց եպիսկոպում<sup>6</sup>: Նրա հաջորդ Մունզիրը նույնական միաբնակության ջերմ պաշտպան էր: Այս հոդի վրա Բարաքերությունները լարվեցին Ղասանի և Բյուզանդիայի միջև, մանավանդ. որ այդ ժամանակ հայերը, ասորիները և հրանց ենթակա քրիստոնյա արաբները մի ընդհանուր ճական էին կազմել երկարնակ ուստունքը պարտադրելով՝ Բյուզանդիայի շանքերը ի դերև հանելու համար: Քրիստոնյա արաբները ապրում էին հիմնականում Բյուզանդիական Արաբիա (Բուտրա կենտրոնով) և մասամբ Փյունիկան Լիբանան (Դամասկոս կենտրոնով) համագներում:

Մահմետականության երեսն գալու հայութեն քրիստոնեությունը տարածված էր արաբական բազմաթիվ ցեղերի մեջ: Բացի Եմենի (Նաջրան) Հիրայի և Ղասանի քրիստոնյա արաբներից քրիստոնեությունը նորունել էին հայ Բաքր, Տաղլիք և այլ ցե-

<sup>3</sup> Մունզիր (Մունդա) ամուսուկ իշխաններ կային թէ' Լահամիների, թէ' Ղասանների մոտ: Սրանք պահունարու ձևով միշկում են բյուզանդացի պատմիների մոտ: Պրոկոպիոս Կեսարացի, թարգմ. Հ. Բարթիկանի, Երևան, 1967, էջ 47—49, 77—78.:

<sup>4</sup> Hitti, History of the Arabs, p. 62—64.

<sup>5</sup> Н. В. Пигуловская, Арабы у границ Византии и Ирана в IV—VI вв. М.—Л., 1964, стр. 180—214.

<sup>6</sup> Hitti, History of the Arabs, p. 79,

ներ Արաբիայի հյուսիսում: Սակայն Հիջազում նոր կրոնը հաջողություն չունեցավ:

Առաջին խալիֆաները արար քրիստոնյաների նկատմամբ ավելի խիստ էին, քան օտար քրիստոնյաների: Օմար խալիֆան Միջագետք տեղափոխունց Եմենի քրիստոնյաներին՝ եւելով այն սկզբունքից, որ Արաբիայում բացի մահմետականությունից այլ կրոն չպետք է գոյություն ունենար: Այսուհետեւ նույնիսկ Թ դարում Եմենում հիշկում է օրինակ Մար Պետրոս եպիսկոպոսը: Մուավիայի ժամանակ (661—680) վերաբերմունքը մեղմ էր քրիստոնյա արաբների նկատմամբ: Նրա կանանցից մեկը քրիստոնյա էր Քալք ցեղից, իսկ Տաղլիք ցեղին պատկանող հոչակալոր Ախմաջ քրիստոնյա բանաստեղծն արքունիք էր մտնում խաչը վզին:

Սակայն հետագայում Օմայան և մանավանդ Աբբասյան խալիֆաները դաժան վերաբերվեցին քրիստոնյա արաբներին: Թ դարից հետո գտարյուն արար քրիստոնյաներն այլև չեն հիշվում, այլ նրանք միանուվում են արաբացած ասորիների ու դպատիների (և այլոց) զանգվածի մեջ:

Անհրաժեշտ է հատկապես ընդգծել, որ այն զանգվածը, որն ամբողջ միջնադարում և այսօր էլ ծանոթ է «քրիստոնյա արար» անվամբ, ըստ Էլուչան բաղկացած է Վերին Միջագետքի, Աստրիքի, Պաղեստինի ու Եղիպատոսի արաբացած քրիստոնյա ազգաբնակչությունից: Դրանք են՝ արաբացած ասորիներու հատորականները, հակորիկ ասորիները, հունադական մելքիտները, մարունիները և դպատիները:

Արաբական նվաճումից հետո ասորիները արաբացած սպաննալիքի առջև գտնվեցին: Եթե նախկինում միաբնակ (հակորիկ) ասորիները և հետուրականներն իրենց էին ենթարկել քրիստոնյա արաբներին՝ ասորիները մասամբ տարածելով հրանց մեջ, ապա այժմ նվաճումից հազիկ մեկ դար անց ասորիները արագորեն լորացնում էին արաբներն, այնքան, որ Թ դարում արդեն ասորիներն իրեն մեկտեղ արաբներն են օգտագործվում էին մատենագրության մեջ:

Ընդհանուր անունով ասորի կոչված զանգվածը Ը—Թ դարերում (երբ արաբցումը արդեն նկատելի էր) չորս եկեղեցական համայնքներից էր բաղկացած՝ հետուրական, հակորիկ, ասորի, հունադական (մելքի) և մարունի:

Դեռևս Ե դարից գոյություն ունեցող հետուրական, այսինքն բաղդեական (արար.

<sup>7</sup> Անդ, թ. 61,

քիլդանի)<sup>8</sup> եկեղեցին Օմայանների և մասնաւոն Աբրամյանների օրոք կարողացալ իր համար տանելի դիրք ստեղծել: Մծրինի, Զունդիշապորի Անաստրական դպրոցները շարունակեցին իրենց գործունեությունը խալֆայության տաղով գրագիրներ, պաշտոնաներ, բժիշկներ, բարգմաններ և այլն: Աբրամյանների օրոք Անաստրական պատրիարք-կաթողիկոսը (արար. ջաղիկ) տեղափոխվեց Բաղրատ<sup>9</sup>, և նրա ընտրությունը հաստատում էր անձամբ խալիֆան: Հայ էկության ևս ավելի բարձր հեղինակություն ուներ, քան հակոբի ասորինների և հունա-նավան մեջքինների պատրիարքները: Թ դարում Անաստրականները հունարենից արաբերեն բարգմանական մեծ շարժման դեկալավարներն էին հեղեն մշակույթը ծանոթացնելով արաբներին: Բժիշկ փիլիսոփա Հունան իր նսիսակը և որիշներ իրենց կատարած բարգմանություններով հեղաշրջեցին արաբական միտքը: Մյուս ասորինների հման Անաստրականները ևս Թ դարից արդեն սկսել էին արաբերները օգտագործել որպես խոսակցական ու գրական լեզու:

Հայ եկեղեցին Անաստրականների հետ համախ լարված հարաբերության մեջ է եղել: Նեաստրական եկեղեցին ամեն կերպ ձգտում էր իր առաջնությունը պարտադրել և թույլ չեր տալիս, որ մյուս եկեղեցների հոգևոր պետները որևէ հեղինակություն վայելեն խալիֆայության մեջ:

Սակայն ասորի (արար. առորիանի) անոնք միջին դարերում տրվում էր հասկապես հակոբիկ ասորիններին<sup>10</sup>: Արաբական նվաճումն հետո սրանք աշխուժացան, քանի որ այլև չկար Բյուզանդիայի ճեղումը, և կարող էին մրցել թե՛ն Անաստրականների, թե՛ հունադասն մեջքինների հետ:

Անտիոքի միաբնակ պատրիարքները Անաստրականների հման ձգում էին տեղափոխվել Բաղրատ, բայց վերջիններին թելադրանքով Աբրամյան խալիֆաններն այդ բանը թույլ չտվեցին նրանց: Այսուհետեր հակոբիկ ասորինները եպիսկոպոսական Արյու ունենին Տաքրիտում Բաղրատից ոչ հեռու: Անտիոքի հակոբիկ պատրիարքը ընտրվելով ժամանակ պետք է գնար Աբրամյան արքունիք իր հաստատման հրովարտակն ստանալու համար:

Այդ շրջանում Ասորիքում ու Վերին Միջագետքում ասորինները դեռ բավականին

<sup>8</sup> Atiya. A History of Eastern Christianity, p. 267—273.

<sup>9</sup> M. Allard, Les chrétiens à Bagdad, *Arabica*, t. IX, t. III, 1962, p. 375—388.

<sup>10</sup> Atiya, A History of Eastern Christianity, p. 195—199.

մեծ թիվ էին կազմում, օրինակ՝ Եղեսիացում և Տաքրիտում գերիշխում էին: Նրանք համախ վարում էին նաև պետական պաշտոններ, և կային նրանց մեջ մեծ թվով գրագիրներ, քարտուղարներ ու բժիշկներ:

Թ դարում Անաստրականների հետ միասին նրանք մեծ դեր խաղացին արարենների մեջ հեղեն մշակույթը տարածելու գործում, արաբերների թարգմանելով միևնույնական մատենագրության շատ արժեքավոր երկեր:

Անտիոքի պատրիարքությունը, որը գոյացում ուներ քրիստոնեության առաջին դարերից, սերտ հարաբերության մեջ էր հայ եկեղեցու հետ: 726 թվականին Մանազկերտում կայացավ երկու եկեղեցների հայունի ժողովը<sup>11</sup>, որ դավանաբանական հայտնի դարձել էր եկեղեցների դիրքորոշումը թե՛ օմայան խալիֆայության, թե՛ Բյուզանդիայի նկատմամբ: Հայ ասորի մատենագիր Դիոնիսիոս Բարսավիկոսի վկայության Մանազկերտի ժողովից հետո հայերը աստիճանաբար սկսեցին իշնել Ասորիք: Հովհաննես Օձնեցի կաթողիկոսը Ասորիք է ուղարկում Յ հայ եպիսկոպոսի նրանց նովիկու համար, իսկ ասորվոց Աթանասիոս պատրիարքը հայերին տրամադրում է մի վանք<sup>12</sup>:

Ը—Թ դարերում Հայաստանում այնքան շատ է եղել ասորի ազգաբնակչությունը, որ գոյացել են մի քանի եպիսկոպոսական թեմեր՝ Հանձիթ, Խոյաթ, Կարսն բաղար (Թեմողոսապոլիս), Շիմղաթ, Խարքեր և այլ վայրերում<sup>13</sup>: Եղել է նաև Մեծ Հայրի եպիսկոպոսական վիճակը (թեմ), որին հավանաբար ենթակա էին վերոհիշյալ քաջարների եպիսկոպոսները:

Հակոբիկ ասորինները միշտ բարյացական են եղել հայերի նկատմամբ: Հայ Թովմա Արծրունի վկայության, 850—852 թվականների ապատամբության ժամանակ ձերբակալված և Միջազգետ ուղարկված հայ հայստարների մի մասը մերժելով հավատախիս լինել համատակլեց: Դրանց մեջ էին Սմբատ սպագարապետը (Խոստպահոյ) և նրա բոլոր

<sup>11</sup> Ե. Տեր-Միհնայան, Հայոց եկեղեցու հարաբերությունները ասորվոց եկեղեցների հետ, Եջմիածին, 1908, էջ 173—197:

<sup>12</sup> A. Mingana, The Work of Dionysius Bar Salibi against the Armenians, Woodbrook Studies vol. IV, Cambridge, 1931, p. 55.

<sup>13</sup> Հ. Թովմացյան, Միջազգետ և Ասորիքի հայեր զաղթավայրերը, Հայ ժող. պատմություն, համ. Գ, Երևան, 1977, էջ 506:

<sup>14</sup> Chronique de Michel le Syrien, Paris, 1963, III, (Appendice V).

Հոհիսիմե տիկինը (Արծրունյաց իշխանութին), որոնց մարմինները հակորիկ ասորիները «փառաւորապէս, ըստ օրինի քրիստոնէց»<sup>14</sup> հոդին են հանձնում:

Ասորիքի կողմերում գոյություն ունեցող չորրորդ համայնքը մարտնիներն (սուրբ Մարտնի հետևորդները) էին: Է դարում, Հերակլ կայսեր ժամանակ, Օրանք ընդունել էին միակամությունը: Լիքանանի լեռներն ապաստանած այս միաբանությունը ձգուում էր անկախ դառնալ Անտիոքի մելքիս պատրիարքությունից և ահա Ը դարի սկզբին, օգտվելով այն առիթից, որ Անտիոքի մելքիս պատրիարք Կ. Պոլիս էր փախել, մարտնիները իրենց պատրիարք ընտրեցին Հովհան Մարտնինը<sup>15</sup>:

Մարտնիները լավ հարաբերությունների մեջ էին նեասորականների հետ և դրա շնորհիվ Օրանք Բաղդադի արքունիքի հետ իրենց հարցերը հետո էին լուծում: Սակայն Լիքանանի լեռնականները միշտ ձգուում էին իրենց ինքնավարությունը պահպանել, որի հետևանքով եղան մի քանի ապատամություններ, ինչպես օրինակ 759—760 թվականների ապատամությունը Մանսոր խալիֆայի օրոք:

Ահա այս չորս համայնքներն էլ Թ—ԺԱ. դարերում դարձել էին Երկինքու, և արաբերները Օրանք համար դարձել էր մատենագրության և աստիճանաբար նաև եկեղեցական ծիսակատարության լեզու: Նեստորականների, հակորիկների և մարտնիների եկեղեցներում ասորերնեն հետ մեկտեղ արաբերնեն էր գործածվում, իսկ հունաշավան մելքիսների մոտ հունարենի կողքին՝ արաբերնենք:

Ասորիքի և Վերին Միջագետքի կողմերում հայկական բազմաթիվ գալոյավայրեր կային խալիֆայության տիրապետության ժամանակ և մանավանդ ԺԱ.—ԺԳ դարերում: Կային նաև հայկական իշխանություններ: Այսպես սելջուկյան արշավանքների ժամանակ Եղենիս (Ուտիս) քաղաքի կառուպարիշն էր Թորոս իշխանը<sup>16</sup>: Եղենիայում և Անտիոքում կային եպիսկոպոսական Աթոռներ: Ժ—ԺՄ դարերում երբ Անտիոքը բյուզանդական տիրապետության տակ էր գտնվում, քաղաքի կառավարիշ էին Հշանակվում նաև հայ իշխաններ: Հայերը կարելու դիրք ունենալու ժամանակում, որը մեծաթիվ հայ քնակչություն կար և կար եպիսկոպոսական վիճակ, որը 311 թվականին

<sup>14</sup> Թովմայի վարդապետի Արծրունոյ Պատմութիւն տաճճ Արծրունեաց, Պետերուրա, 1887, էջ 208:

<sup>15</sup> Atiya, p. 396.

<sup>16</sup> Մատթեոս Ուտիսեցի, ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898, էջ 248—252:

դարձավ պատրիարքական Աթոռ<sup>17</sup>: Միջագետքի և Ասորիքի հայ քնակչությունը սերտ հարաբերության մեջ էր տեղի արաբախոս հակորիկ ասորիների և այլ համայնքների հետ:

Վերին Միջագետքի և Ասորիքի քրիստոնյաներից<sup>18</sup> (որոնք հիմնականում ասորիներ էին) հետո երկրորդ քրիստոնյան խոշոր զանգվածը, որն արաբացավ, Եգիպտուի դպրիներն էին<sup>19</sup>:

Արաբները Եգիպտոսը նվաճեցին այն ժամանակ, երբ Սելեսանորիայի Աթոռի համար խստ պայքար էր գնում դպտի միաբնակ հոգևորականության և բյուզանդական իշխանությունների միջև: Արաբական նվաճումը անուղղակիորեն վերականգնեց միաբնակ հոգևորականության դիրքերը: Սակայն Ը դարում սկսեցին խստություններ, և ահա դպտիները քանից ընդվեցին: Բայց Մամուն խալիֆայի ժամանակ ծագած ապատամության նվաճումից հետո խստ թուլացան: Թ—Ժ դարերում դպտիներն այնքան էին արաբացել, որ ասորիների հման երկինքու էին: Ղատերենի կողքին արաբերենը դարձել էր խոսակցական և գրական լեզու:

Ֆաթիմյանների օրոք (969—1171) Եգիպտոսի դպտիները դեռ բավական ազդեցիկ դիրք ունեին: Կային նահանգների դպտի կառավարիչներ և այլ պետական պատույնացեր: Ֆաթիմյան Ազիզ խալիֆան ամուսնացել էր քրիստոնյան մելքիս Կնոջ հետ, որի ազգեցության շնորհիվ Օրա Երկու Եղբայրները դարձան Սելեսանորիայի և Երուսաղեմի պատրիարքներ<sup>20</sup>: ԺԱ. դարերում դպտի պատրիարքարանը Սելեսանորիայից տեղափոխվեց Կահիրե (այժմ Հին Կահիրե), որը ընդիշտ մնաց:

Ֆաթիմյան ժամանակաշրջանում Եգիպտոսում կար նաև բազմամարդ հայ գաղութ: Երկան եկավ հայազգի վեցիրների մի ամրող շարք<sup>21</sup>, որը կարևոր դեր խաղաց երկրի քաղաքական և մշակութային կամքում: Երբ ԺԱ. դարերում վեճ ծագեց հայերի

<sup>17</sup> S. Սատրամեանց, Պատմութիւն Երուսաղեմի, Ա., Երուսաղեմ, 1981, էջ 509:

<sup>18</sup> Արաբախոս քրիստոնյաններ կային նաև Սպահանում (Անողուա), որը Ը—ԺԳ դարերում գոյացավ արաբախոս սպահացների (մողարաք) մի սովոր զանգված: Դեռևս Ը դարում մողարաքներն այնքան շատ էին, որ Սատրամանցունը լատիներենց արաբերենի թարգմանելու պահանջ առաջացավ. Ph. Hitti, History of the Arabs, p. 543.

<sup>19</sup> Atiya, p. 79—84.

<sup>20</sup> Hitti, p. 620.

<sup>21</sup> Գ. Մարրեան, Ականաւոր հայեր Եգիպտոսի մեջ, Գամիրե, 1947, էջ 23—36, 75—80:

և ղպտիների միջև, հայագիտ վեզիր Բագր ալ-Գամալիի հրամանով Աղեքսանդրիայի պատրիարքը ժողով գումարեց, որին ներկա էր հայոց Գրիգոր արքեպիսկոպոսը, և տարակարծությունները հարթվեցին: Եգիպտով հայ վեչիբների մեջ բացառիկ տեղում հայ Վահրամ Պահապնեցին, որը հայստարիմ էր մնացել իր քրիստոնեական կրոնին: Սրբ օրոք հայերի թիվը հասել էր 30 հայզարի: Կար նաև հայկական զրաբանակ, որը կարևոր դեր էր խաղում երկրի բաղաքական կյանքում:

Արքայաց խալիֆայության թուլացումից հետո Ժ.Ա.—ԺԳ դարերում (սեղուկան տիրապետության ժամանակաշրջանում) արդեն գոյություն ուներ քրիստոնյան արարենի մի հայկական զանգված, որն արարենին լուրացրել էր և դրա կողքին դեռ օգտագործում էր աստրենը, դպտերենը և հուսարենը: Այս զանգվածը բավական մեծ ազդեցություն ուներ խալիֆայության երկրների տնտեսական, հասարակական, մշակութային և նոյնիսկ բաղաքական կյանքում: Արաբացած ասորիներն ու ղպտիները դատնում էին համանակների կառավարիչներ և երեսու նոյնիսկ մահմետական տիրակալների վեցիրներ<sup>22</sup>:

Հայաստանը սերս հարաբերության մեջ էր արևելքի քրիստոնյաների հետ, և Հայոց թագավորությունը (Բագրատունյաց և Կիլիկյան շրջաններում) բարոյացն զրավիճ էր քրիստոնյան արարենին: Ներսէ Շնորհափ կաթողիկոսի (1166—1173) և ասորիների պատրիարք և նշանավոր պատմիչ Միքայէլ Աստրու միջև սերս հարաբերություններ կային: Վերջին 1198 թվականին Տարսոնում ներկա եղավ Լուսն Բ Մեծագործի հանդիսավոր թագավորությանը<sup>23</sup>: Երբ Միքայէլ Աստրին պայքարի մեջ էր իր հայկանակորդների հետ, Լուսն Մեծագործը զրավիճ եղավ ճրան<sup>24</sup>:

ԺԳ դարում քրիստոնյան արարենի տարբեր համայնքները դեռևս կարևոր դեր էին կատարում արևելքի երկրներում: Անոնիրի հակոբիկ պատրիարքությանը դեռ ենթակա էին բան մետրոպոլիտություններ և հարցուի չափ եպիսկոպոսություններ: Մոնղոլ զրավական Հաղպատի վրա հարձակամաս ժամանակ նետորական պատրիարքը միջմելու համար գիշատիչ նվաճողի վայրագությունը, սակայն ի-

զոր<sup>25</sup>: Համեմայի ներս քաղաքի նվաճումից հետո նեասորականները կարողացան իրենց համար նպաստավոր դիրք ստեղծել:

Պատրիարքը սուացավ Արքայաց խայի պալատներից մեջ և այնուել հաստատվեց: Հեթանու մոնղոլները դեռ բարյացական էին նեասորականների նկատմամբ, որոնց պատրիարքը որոշ նեղինակություն էր վայելու: Այդ շրջանում նպաստալոր վիճակում էին նաև մարտնեները, որոնք խաչակրաց իշխանությունների օրոք նաևսամբ ուժանացան: Օրինակ Տրիպոնի կոմսության մեջ մարտնեները մեծ թիվ էին կազմում: Նրանք ստուժանարար նորամուծություններ էին կատարում լատինական ծեսից, մինչև որ միացան Հռոմի Արքունիք:

Խաչակրաց պաշականների հետևանքով ստեղծված բարդ իրադրության մեջ որոշ նահմեդական երկրներում մասամբ փոխվեց վերաբերմունքը քրիստոնյան արարենի նկատմամբ: Եգիպտոսի Ազորյան սովորական Սալահ ալ-Դինը սկսեց նեղել հարավային Եգիպտոսի պայտիներին, հարձակվեց Նուրբայի քրիստոնյան թագավորության վրա, Աղեքսանդրիայում բռնագրավեց ու կործանեց և Մարլոս եկեղեցին: Ակսունանդերձ Երուսաղեմի խաչակրաց թագավորության կործանումից հետո Սալահ ալ-Դինը փոխեց իր վերաբերմունքը. դպտիները որոշ պաշտոններ ստացան, և ներեց իր բարտուղարը դպտինի էր<sup>26</sup>:

Սակայն ԺԳ դարի վերջին և ԺԴ դարի սկզբին արմատապես փոխվեց քրիստոնյան արարենի դրությունը: Մամլուքների (1250—1516) իշխանության տիրանալը Եգիպտոսում և մոնղոլների մահմետականությունն ընկրունելը (ԺԳ դարի սկզբին) մահացու Բարիկած տվեցին արևելքի քրիստոնյաններին և հատկապես քրիստոնյան արարենին:

Սուաջին մամլուքների (որոնք թրորքական ծագում ունեին) օրոք հայածանները խիստ բնույց ստացան: Եկեղեցիների ու վանքերի կործանումը Եգիպտոսում և դրա տիեզերի պաշտոններից հեռացումը սովորական երկույթներ դարձան: Միայն Կահիրէի շրջակայրում 54 եկեղեցի կործանվեց: Վայուների մի մասը ընդունեց մահմետականությունը: Վայրագություններն այս աստիճանի հասան, որ դրանց միջամտեցին կ. Պոլս հունաց պատրիարքը, Արագոնի թագավորը և Եթովպիայի Անգուսը (թագավորը)<sup>27</sup>:

Մամլուքները Ասորիքում կործանելուց հետո խաչակրաց վերջին իշխանություննե-

<sup>22</sup> А. Мец. Мусульманский ренессанс. М., 1966, стр. 85.

<sup>23</sup> Н. В. Пигуловская, Византия и Иран на рубеже VI и VII веков. М.—Л., 1946, стр. 33.

<sup>24</sup> Atiya, p. 202.

<sup>25</sup> Անդ, p. 274.

<sup>26</sup> Atiya. p. 95.

<sup>27</sup> Atiya, p. 98.

իր, ականցին հալածել քրիստոնյա ազգաբնակչությունը: Նրանք մզկիթի վերածնեցին քաղմայիկ եկեղեցիներ Բեյրութում, Սիդոնում, Տրիպոլիտան և այլ վայրերում: Հայածներից փախչելով մարունիների պատրիարքը ապաստանեց լեռնային Լիբանան: Սարիքում մեծ կորուսներ տվեցին նաև հակոբիկ ասորիները, որոնք արդեն ժողովից հետո երկրորդական դիրք ունեին քրիստոնյա արարթների միջավայրում: Սարիքում կատարած չարագործություններից հետո մամլուքները իրենց հարված ուղղեցին Կիլիկիայի հայկական թագավորության դեմ, որն ի վերջո կործանեցին 1875 թվականին:

Սոնուլների մահմետական դառնապով մահացու հարված ստացան նեստորական ասորիները: Բաղդադում հրանց պատրիարքը հետացվեց իր պալատից, և սկսածին հայածները<sup>28</sup>: Վերջապես Լեռնկ Թեմուրի մահացիութ արշավանքներից հետո նեստորական պատրիարքը Բաղդադից տեղափոխվեց Մարտա:

Ուշ միջնադարում (օսմանյան տիրապետության տակ) հնան վերիվայրումներից հետո թեև նեռ իրենց գորությունը շարունակում էին պահպանել խալիֆայության ժամանակներից եկող հինգ քրիստոնյա արարական համայնքները (Նեստորական, հակոբիկ, հունադարձան մելքիտ, մարոնի և դասի), պյուհաները նրանց ընդհանուր պատկերը արմատապես փոխվել էր: Ինչ վերաբերում է լեզվին, ապա արաբերենը հրանց բոլորի մոտ լիկ իշխում էր, իսկ աստրենն ու դպտերենը գրեթե մնած լեզուներ էին:

Ասպարեզից դուրս էին եկել նեստորականները և հակոբիկ ասորիները: Նեստորական պատրիարքները, որոնք Մար Շիմոն էին կոչվում (լինելով ժառանգարարներից), ապաստան էին գտնել Վանա և Ուրմիա լճերի միջև քրդաբնակ շրջանում: Խոկ հակոբիկ ասորիների պատրիարքը քաշվել էր Մարդիմի մոտ գտնվող Դայր ալ-Ջաֆարան վանքը<sup>29</sup>:

Մրա հետ մեկնել իրենց դիրքը և ազդե-

ցութունը պահպանել էին հունադարձան մելքիտները և Եգիպտոսի ղպտիները, իսկ մարունիները ավելի էին ուժեղացել: Մելքիտ (հովանողական կոչված) պատրիարքը նաստում էր Դամասկոսում<sup>30</sup>, իսկ ղպտիների պատրիարքը՝ Կամիրենում, և հրանց ներքանական կատարության մեջ լատին եկեղեցուն ուշ միջնադարում, առավել ևս մերձեցան և 1736 թվականին վերշնականապես ամրապնդեցին իրենց կապը Հռոմի հետ: 1584 թվականին Հռոմում բացվեց մարունիների ճեմարան, որի սաները մշակութային աշխուզ գործունեություն ունեցան Սիրիայում և Լիբանանում: Այդ ժամանակ և հաջորդ դարերում քրիստոնյա արարթների կարստրագույն կենտրոնն էր Հալեպը<sup>31</sup>, որը կային բազմաթիվ դպրոցներ:

**Ժ 2.** Ժ 2. դարերում սկսեց կաթոլիկության ներթափանցումը քրիստոնյա արարական միջավայրը: Ժ 2. դարում նեստորականների մոտ պատրիարքական ընտրության ժամանակ տեղի ունեցավ մի պառակտում, որի հետևանքով մի խումբ հարեց լատին եկեղեցուն: Ժ 2. դարում ծնունդ առավ ասորի հոսունադարձան պատրիարքությունը, իսկ Ժ 2. դարում կազմավորվեց հովանողության եկեղեցին, որն իրեն վերապահեց «մելքիտ» անունը: Եգիպտոսում ղպտի եկեղեցին կարողացավ դիմադրել, և կաթոլիկությունը քիչ տարածում ունեցավ<sup>32</sup>:

Հայերը սկսու հարաբերության մեջ էին մարունիների հետ ուշ միջնադարում, երբ Սատրիքում հոսունադարձան հայերի համայնք առաջացավ: Վերջիններիս մի մասը դառնալով արաբախոս սկսեց մասնակցել մարունիների մշակութային կյանքին<sup>33</sup>:

<sup>28</sup> Ժ 2. Ժ 2. դարերում Դամասկոսի պատրիարքները երկարատև պայքար մղեցին ազատվելու համար Կ. Պոլս հունաց պատրիարքի գերիշխանությունից և միայն 1898 թվականին հրանց հաջողվեց դառնալու:

<sup>29</sup> A. Krymskiy, История новой арабской литературы. М., 1971, стр. 316—318.

<sup>30</sup> A. Krymskiy. История..., стр. 108—119.

Ժ 2. դարում քրիստոնյա արարթների կենտրոնը դարձավ Բեյրութը:

<sup>31</sup> Ժ 2. դարում բոլորական հոսանքը որոշ չափով տարածվեց քրիստոնյա արարթների մեջ, և առաջանակ փոքր համայնքներ տարեկ երկրներում:

<sup>32</sup> G. Graf, Geschichte der christlichen Literatur, Vatican, 1951, S. 82—93.

<sup>28</sup> Ph. Hitti, p. 555—556.  
<sup>29</sup> Atiya, p. 23<sup>1</sup>.